

Համոզված եմ, որ, հաղթահարելով այս աղյուսները, վերջապես կարող եմ հասկանալ՝ ինչ է միկրոկոսմոսը ու ինչ՝ մակրոկոսմոսը, ու մի կերպ բռնել կյանքի կեղտոտ պտուկը, որ բուրում է մահացած աղոթքի գույժով: Այդ աղյուսները ես եմ հորինել, սա ուղղակի ելման կետ է բոլոր ճանապարհորդություններիս համար: Վերջին անգամ՝ Լոնդոն:

Առանց այդ աղյուսների երբեք ոչ մի տեղ չեմ հասնի, քանի որ մեկ չափազանց վաղ է, մեկ՝ չափազանց ուշ, ու ես մշտապես անկեղծության կենտրոնում եմ ու մշտապես՝ հուսահատության եզրին, ու հոգիս դատապարտված է հավերժական թափառումների, թեպետ, գիտեմ, կարելի է եւ փիլիսոփայորեն վերաբերվել այս ամենին, որ քաղցրությունն է գարեհացի: Աշխարհը ննջում է դեռ, ու գիշերը գտնում է ճանապարհը. այն, որ չենք տեսնում, ու կյանքն այնուամենայնիվ ընթանում է՝ մեզ դուր է գալիս, թե ոչ, ու երբեմն-երբեմն դառնում ենք օպտիկական ճառագայթումների զոհեր, փոքրիկ-փոքրիկ, աննշան կետեր:

Սա երեւակայությունն է ջրի, որ երազում է: Ու երեւակայությունն է հողի՝ չվող հառաչով, այդպես Միստրալը՝ երգիչը Պրովանսի, արարումի մեջ համբուրում էր անունը Աստծո ու թրջում շուրթերն այլակողմ ցրտով: Վերադառնամ աղյուսներին. ազնուստիկները պնդում էին, որ մարդն ապրում է հավերժ ու մարդն անմահ է, ու ապրելու ուժը տեսնում էին ապագա չունենալու ու նրան հավատալու մեջ, ինչպես այսօր վարվում ենք մենք, ու հիշում եմ՝ Հիսուսի վերքերը սրբում էի քերթվածներիս գունատ թերթերով, բայց տխուր էր Աստված, ով սնվում է հիմա անդամալույծ աշնան դանդաղ մահով: Ես միշտ այստեղ եմ, ու ինձ չի սպառնում ժամանակի կորուստը. բնական զգացողություն է... Ջղածիզ Հիսուսը՝ ձեռքին՝ ճակատագիրը մեռնող տերեւների:

Կլիմաքսի շրջանում կանայք ավելի զգայուն են դառնում, բայց այս մեկը, ով ձեռքերի սոխաբույրով ավտոպահեստամասերի խանութում բռնեց գիրքս, այնպիսի հայացք նետեց վրաս, որ ես ու մարմինս՝ քարացած կավի բնագոյով, հայտնվեցինք հակառակ բեւեռներում: Կարելի էր իհարկե եւ հետ դառնալ, բայց աֆազիան թեթեւությունն ու ցավը խառնել էր իրար, ու ես գամվել էի տեղում, ինչպես խոնավությունը՝ կողոսկրերիս մեջ, ինչպես հարբած երկինքը, որ սերմերը թողնում է երկրի նեխած արգանդում: Հասկանում եմ, որ անհուսությունն ամենամեծ պատժաչափն է իրականում իսկապես ապրելու համար, որ Սիրիուսը երբեմն-երբեմն հայտնվում է Սեւ խոռոչի կենտրոնում, որ Սպիտակ թզուկները չունեն իրենց սեփական լույսը, ու տիեզերքի ջերմային մահն արտացոլվում է նախ՝ ծայրահեղ ամրության եւ ապա՝ բարիոնների հաշվին.  $n_b = \frac{\rho c^3}{m_p} = 1,124 \cdot 10^{-5} \Omega_b h_{100}^2$ .

բայց ինչո՞ւ այնտեղ՝ Լոնդոնում, կանայք կլիմաքսից չեն աղավաղվում, ու գրքերը վաճառվում են գրախանութներում, ու մահը չի զարթնում հեռուներից, ու լիալուսինը մահվան երգ չի գրում:

Վերադառնամ աղյուսներին. մեր ստեղծածն այնուամենայնիվ մարմին է, ու ես գուցե մի հեռու տեղ եմ, ասենք՝ Հյուսիսային բեւեռում, իսկ իմ սենյակում՝ բանաստեղծություններիս հակառակ կողմում, արթնանում են նրանց պատկերները, ու իրերը հանգիստ ննջում են

մինչեւ առավոտ, ու սիրեաները չեն երգում Ողիսելւի համար: Իսկ Հյուսիսայինը (բելեռը) կամաց-կամաց քայքայում է առաջին տպավորությունը: Ձեւը նույնպես քայքայվում է, ինչպես մենք ենք քայքայվում՝ ավտոպահեստամասերի կողքին գրքեր տեսնելով: Ժամանակը նորից սողում է՝ խոնավ, փսլնքոտ այտոսկրերը գետնին հպելով, խոցված գարշապարով Աքիլեոսի պես: Ոչ ոք հավերժ չի արտասվում ու հավերժ երջանիկ չէ, նույնիսկ նրանք, ում մեղրամիսը սկսվում է այսօր: Միայն մենք՝ Գրքով Հնայվածներս, տրված անվերջ թափառումներին, թռիչքից թռիչք ձուլվելով աշխարհին, լվացվում ենք ժամանակի սոխաբույրից, ծիծաղում ենք... հավերժ այդ ծիծաղն էլ դառնում է պատմություն՝ Գրքի Պատմություն:

- Բարեւ, մահ,- շշնջում եմ՝ հնայելով նրան ու մոտեցնում եմ վերջին սահմանին:  
Ջրապտո՛ւյտ է:

Նաիրա ՀԱՄԲԱՐՉՈՒՄՅԱՆ

\* Գրքով հնայված (լատ.):